ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Սարչապետ համայնք, գ. Սարչապետ,
Հեռ. (077)867459 , sarchapet.lori@mta.gov.am

N 75-18
01 մարտ 2018թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 27-ի թիվ 10-Ա, 12-Ա, 13-Ն/իր հավելվածով/, 14-Ն /իր հավելվածով/, 15-Ա, 16-Ա /իր հավելվածով/, 17-Ն /իր հավելվածով/ և 18-Ա որոշումները:

Առդիր՝22 էջ:

Համայնքի ղեկավար՝ **Բորիս Բարոյան**

Կատ. '

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N-10-Ա

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ ***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Հաստատել Սարչապետ համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 27-ի թիվ 02 նիստի հետևյալ օրակարգը՝

1) Սարչապետ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան և 2017 թվականին համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին: (Զեկ.Ս.Բարսեղյան)
2) Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին: (Զեկ.Ա.Մարտիրոսյան)
3) Սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին մասնակցելու և նախաձեռնող խմբի կազմը հաստատելու մասին: (Զեկ.Ա.Մարտիրոսյան)
4)Սարչապետ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին: (Զեկ.Ա.Մարտիրոսյան)
5)Սարչապետ համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները հաստատելու մասին: (Զեկ.Ա.Մարտիրոսյան)
6)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգը հաստատելու մասին: (Զեկ.Ա.Մարտիրոսյան)
7) ՀՀ Լոռու մարզի Սարչապետի համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերը պետական արխիվի տնօրինմանը հանձնելու մասին: (Զեկ.Ա.Մարտիրոսյան)
8) Սարչապետ համայնքի <<Պարտեզ>> նախադպրոցական ուսումնական համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածուի մասին: (Զեկ.Ա.Մարտիրոսյան)

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
5. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
7. ՄԽՈՅԱՆ ՁԱՎԵՆ
8. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՒՄԻԿ
9. ՓԼՋՈՅԱՆ ՎԵՐՇԱԼՈՒՅՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N-11-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՏՆՕՐԻՆՄԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Արխիվային գործի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետի համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերը՝համաձայն հավելվածի հանձնել պետական արխիվի Ստեփանավանի տարածքային բաժնի տնօրինմանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
5. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
7. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ
8. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ
9. ՓՆՋՈՅԱՆ ՎԵՐՋԱԼՈՒՅՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Սարչապետ համայնքի
ավագանու
2018 թվականի փետրվարի 27-ի
թիվ 11-Ա որոշման

ՍԱՐՉԱՊԵՏ

1. Համայնքի ավագանու որոշումներ 2003-2007թթ.
2. Աշխատանքային պայմանագրերի գրանցամատյան 2006թ.
3. Մշակույթի տան աշխատանքային պայմանագրերի գրանցամատյան
4. Գյուղապետի կարգադրություններ, որոշումներ 1999-2000թթ., 1997-1998թթ.
5. Ժամանակավոր բնակիչներ 2010թ.
6. Հրամանագիրք 2006թ.
7. Գյուղապետի որոշումներ 2005-2008թթ. և կարգադրություններ 2006-2010թթ.
8. Բաժանվող ծխերի բնակելի տան գույքի և հողամասերի բաժանող հանձնաժողով
9. Սարչապետ համայնքի ավագանու արձանագրություններ 2008-2012թթ.
10. Վարձու աշխատանքի ընդունման գրանցամատյան 2006-2007թթ.
11. Գյուղապետի որոշումներ 2008-2012թթ.
12. Համայնքի տնտեսական գիրք 1980-1982թթ.

ՆՈՐԱՇԵՆ

1. Համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների 2008-2013թթ.
2. Հրամանագիրք 2009-2017թթ.
3. Գյուղապետի որոշումներ և կարգադրություններ 2004-2011թթ.
4. Աշխատանքային պայմանագրերի գրանցման մատյան
5. Հրամանների գիրք
6. Հրամանների գիրք
7. Ավագանու նիստեր 1997-2008 թթ.
8. Այբբենական գիրք
9. Համայնքի գիրք 2006-2010թթ.
10. Համայնքի գիրք 2006-2010թթ.
11. Համայնքի գիրք 2006-2010թթ.
12. Համայնքի գիրք 2006-2010թթ.
13. Համայնքի գիրք 2006-2010թթ.
14. Համայնքի գիրք 2006-2010թթ.
15. Համայնքի գիրք 2011-2015թթ.

16. Համայնքի գիրք 2011-2015թթ.
17. Համայնքի գիրք 2011-2015թթ.
18. Համայնքի գիրք 2011-2015թթ.
19. Համայնքի գիրք 2011-2015թթ.
20. Համայնքի գիրք 2011-2015թթ.
21. Այբբենական գիրք 2011-2015թթ.

ՊՐԻՎՈԼՆՈՅԵ

1. Գյուղապետի կարգադրություններ 1997-2010թթ.
2. Գյուղապետի որոշումներ 1997-2015թթ.
3. Ավագանու նիստերի արձանագրություններ 1997-2010թթ.
4. Հրամանների գիրք 1968-1979թթ.
5. Համայնքի տնտեսական գիրք 2011-2015թթ.
6. Համայնքի տնտեսական գիրք 2011-2015թթ.
7. Համայնքի տնտեսական գիրք 2011-2015թթ.
8. Համայնքի տնտեսական գիրք 2011-2015թթ.
9. Համայնքի տնտեսական գիրք 2006-2010թթ.
10. Համայնքի տնտեսական գիրք 2006-2010թթ.
11. Համայնքի տնտեսական գիրք 2006-2010թթ.
12. Համայնքի տնտեսական գիրք 2006-2010թթ.
13. Համայնքի տնտեսական գիրք 2006-2010թթ.
14. Համայնքի տնտեսական գիրք 2001-2005թթ.
15. Համայնքի տնտեսական գիրք 2001-2005թթ.
16. Համայնքի տնտեսական գիրք 2001-2005թթ.
17. Համայնքի տնտեսական գիրք 2001-2005թթ.
18. Համայնքի տնտեսական գիրք 2001-2005թթ.
19. Համայնքի տնտեսական գիրք 1996-2000թթ.
20. Համայնքի տնտեսական գիրք 1996-2000թթ.
21. Համայնքի տնտեսական գիրք 1996-2000թթ.
22. Համայնքի տնտեսական գիրք 1996-2000թթ.
23. Համայնքի տնտեսական գիրք 1996-2000թթ.

ՁՈՐԱՄՈՒՏ

1. Գյուղապետի որոշումներ 1997-2004թթ.
2. Գյուղապետի որոշումներ 2005թ.
3. Գյուղապետի որոշումներ 2006թ.
4. Գյուղապետի որոշումներ 2007թ.
5. Գյուղապետի որոշումներ 2008թ.
6. Գյուղապետի որոշումներ 2009թ.
7. Աշխատակազմի քարտուղարի հրամաններ 2010-2017 թթ.
8. Ղեկավարի կարգադրություններ 1997-2005թթ.
9. Ղեկավարի կարգադրություններ 2006-2008թթ.

10. Ղեկավարի կարգադրություններ 2009
11. Ավագանու նիստերի արձանագրություններ 2007-2010թթ.
12. Հրամանագիրք 2003-2010թթ.
13. Համայնքի տնտեսական գիրք 1996-2000թթ.
14. Համայնքի տնտեսական գիրք 1996-2000թթ.
15. Համայնքի տնտեսական գիրք 2001-2005թթ.
16. Համայնքի տնտեսական գիրք 2001-2005թթ.
17. Համայնքի տնտեսական գիրք Գոգավան 2006-2010թթ.
18. Համայնքի տնտեսական գիրք Գոգավան 2011-2015թթ.
19. Համայնքի տնտեսական գիրք 2006-2010թթ.
20.Համայնքի տնտեսական գիրք 2011-2015թթ.

ԱՐԾՆԻ

1.Աշխատակազմի քարտուղարի հրամաններ
2.Приказы
3.Համայնքի ղեկավարի կարգադրություններ և որոշումներ 1998-2006թթ.
4.Книга приказов о принятии на работу 1989-1991
5.Հրամանագիրք Արծնիի մանկապարտեզի 13.08.1993-ից
6. Книга приказов Арцнийского детского сада
7.Համայնքի տնտեսական գիրք 1986-1990թթ.
8.Համայնքի տնտեսական գիրք 1986-1990թթ.
9. Համայնքի տնտեսական գիրք 1996-2000թթ.
10. Համայնքի տնտեսական գիրք 1996-2000թթ.
11. Համայնքի տնտեսական գիրք 1991-1995թթ.
12. Համայնքի տնտեսական գիրք 1991-1995թթ.
13. Համայնքի տնտեսական գիրք 2001-2005թթ.
14. Համայնքի տնտեսական գիրք 2006-2010թթ.
15. Համայնքի տնտեսական գիրք 2006-2010թթ.
16. Համայնքի տնտեսական գիրք 2011-2015թթ.
17.Աշխատանքային պայմանագրերի գրանցամատյան

ԱՊԱՎԵՆ

1.Աշխատակազմի քարտուղարի հրամաններ 2011-2017թթ.
2. Համայնքի տնտեսական գիրք 2001-2005թթ.
3. Համայնքի տնտեսական գիրք 2006-2010թթ.
4. Համայնքի տնտեսական գիրք 2011-2015թթ.
5.Համայնքի ավագանու որոշումներ 1996-2008թթ.

ՊԵՏՐՈՎԿԱ

1.Համայնքի ղեկավարի կարգադրություններ և որոշումներ 2001-2010թթ.
2. Ավագանու նիստերի արձանագրություններ 2006-2010թթ..
3. Ավագանու որոշումներ 2001-2010 թթ.
4. Համայնքի տնտեսական զիրք 2011-2015թթ.
5. Համայնքի տնտեսական զիրք 2006-2010թթ.

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՆԵՐԱՌՅԱԼ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ

ՊՐԻՎՈԼՆՈՅԵ- 22 գիրք /2005-2013թթ./

ԱՊԱՎԵՆ-8 գիրք /2007-2014թթ./

ՊԵՏՐՈՎԿԱ-10 գիրք /2009-2013թթ./

ՁՈՐԱՄՈՒՏ-26 գիրք /2005-2014թթ./

ՆՈՐԱՇԵՆ-17 գիրք /2005-2014թթ./

ԱՐԾՆԻ-7գիրք/1990-1996թթ./ և մանկապարտեզի 5 գիրք /1990-1995թթ./, աշխատավարձի ցուցակներ /1999-2001 և 2003-2005թթ./

ՍԱՐՉԱՊԵՏ-4 գիրք /1997-2000թթ./ , 2001թ. աշխատավարձի ցուցակ , 32 գիրք /2002-2011թթ./
Սարչապետի մշակույթի կենտրոնի 7 գիրք / 2003-2009թթ./, մանկապարտեզի ցուցակ /1992թ./

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N-12-Ա

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ՊԱՐՏԵԶ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն՝ Սարչապետ համայնքի ղեկավարի առաջադրած «Պարտեզ» նախադպրոցական ուսումնական համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածու Արմինե Սեյրանի Տոմեյանին պաշտոնում նշանակելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
5. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
7. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ
8. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ
9. ՓՆՋՈՅԱՆ ՎԵՐՋԱԼՈՒՅՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N-13- Ջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումով՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
5. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
7. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ
8. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ
9. ՓՆՋՈՅԱՆ ՎԵՐՋԱԼՈՒՅՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

Հավելված
Սարչապետ համայնքի ավագանու
2018թ. փետրվարի 27-ի թիվ 13-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի (այսուհետ՝ համայնք) վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերն ու տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է համայնքի վարչական տարածքում գտնվող՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների, անհատական բնակելի տների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, հանգստի գոտիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման (նաև լվացման) և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար բարեկարգումը և մաքրումը, մաքրության պահպանումը,

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի, բուսածածկերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը,

3) շենքերի և շինությունների հարակից բակային տարածքների պարբերաբար բարեկարգումը և մաքրումը,

4) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխում,փոխարինում,

5) անշարժ գույքի մուտքի լուսավորության ապահովումը,

6) համայնքային նշանակության փողոցներում գտնվող առևտրային նշանակության օբյեկտների տոնական զարդարումը՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 13-ը ներառյալ:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը և փոխարինումը:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմանը համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով և միայն համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում,

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում,

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գույնի փոփոխություններ,

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ,

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

9. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են համայնքի ղեկավարի կամ նրա լիազորած անձի կողմից համաձայնեցված ձևավորման նախագծին և (կամ) հատակագիծ - սխեմային համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Սարչապետի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարանի) համապատասխան մասնագետի կողմից:

10. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և վերանորոգումը իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Պետական լիազոր մարմնի կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են համայնքապետարանի կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

11.Համայնքապետարանի համապատասխան մասնագետի, **վարչական ղեկավարի** կողմից կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի, շինության ճակատների, օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

12. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, կենցաղսպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը և գովազդային վահանակները պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով, չխաթարեն միջավայրը և չխանգարեն հետիոտն և ավտոմոբիլային երթևեկությանը,

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը (փոշուց, աղբից, տերևներից և այլն) և անհրաժեշտ քանակով աղբամանների առկայությունը, մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամը 08:00-ից մինչև 09:00-ն և երեկոյան ժամը 18:00-ից մինչև 19:00-ն,

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը՝ տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11:00-ն, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21:00-ին և դրանից հետո,

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից,

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում կամ ճամփեզրին,

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:

13. Համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և (կամ) տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

14. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն համայնքապետարանի կողմից տրված ֆիտոնախագծի համաձայն:

15. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն,այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը համաձայնեցնում է համայնքի ղեկավարի հետ:

16. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը, սույն կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

17. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա նրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

18. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործման կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

19. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4)ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների, գազալցակայանների, արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից 5-15 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

5) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 5-10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

7) առանձին դեպքերում կարող են կիրառվել սույն կետի 1-6-րդ ենթակետերում նշված ծավալներից տարբերվող ծավալներ՝ համայնքապետարանի համաձայնությամբ:

20. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 156-րդ հոդվածով նախատեսված տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի **տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով**:

21. Մինչև վարչական տուգանքի նշանակումը համայնքի ղեկավարը անշարժ գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին տալիս է ծանուցագիր – զգուշացում նրա տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման մասին՝ նշելով իրականացվելիք բարեկարգման աշխատանքները և ժամկետը, որը չի կարող գերազանցել **30 օրը**:

22. Անշարժ գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին բարեկարգման աշխատանքները կատարելու համար տրված ժամկետի ավարտից հետո, եթե այդ աշխատանքները չեն իրականացվել համայնքի ղեկավարի կողմից տուգանքի նշանակումը պարտադիր է:

23. Բարեկարգման աշխատանքները չկատարելու համար նշանակված և գանձված վարչական տուգանքներից առաջացած գումարները համայնքի ղեկավարը օգտագործում է միայն համայնքում բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար:

Աշխատակազմի քարտուղար՝ **Անժելա Մարտիրոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N-14-Ն

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետով և <Գովազդի մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Սարչապետ համայնքի վարչական սահմաններում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
5. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
7. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ
8. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ
9. ՓՆՋՈՅԱՆ ՎԵՌՉԱԼՈՒՅՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Հավելված
Սարչապետ համայնքի ավագանու
2018 թվականի փետրվարի 27-ի թիվ 14-Ն որոշման

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնները (այսուհետ՝ Կանոններ) սահմանում են Սարչապետի համայնքի վարչական սահմաններում արտաքին գովազդի, այդ թվում տրանսպորտային միջոցների վրա տեղադրվող (այսուհետ՝ Գովազդ) տեղաբաշխման (տեղադրման) կարգն ու պայմանները և այդ գործընթացի մասնակիցների փոխհարաբերությունները:

2. Գովազդի տեղաբաշխումն իրականացվում՝ <<Գովազդի մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներին, այլ օրենքներին ու իրավական ակտերին և սույն կանոնների պահանջներին համապատասխան:

3. Սարչապետի համայնքի վարչական սահմաններում Գովազդը տեղաբաշխվում է վահանակների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, էլեկտրոնային էկրանների, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարների (մարկիզներ), այլ նյութական կրիչների և տեխնիկական միջոցների (այսուհետ՝Գովազդի միջոցներ) ձևով:

4. Գովազդը կամ Գովազդի միջոցը կարող է տեղաբաշխվել (տեղադրվել) պետական, համայնքային կամ այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի, շենքերի, շինությունների (հիմնական կամ ոչ հիմնական), դրանց վրա տեղակայված այլ կառույցների, կոնստրուկցիաների, տրանսպորտային միջոցների և այլ օբյեկտների (այսուհետ՝ նաև Գովազդի օբյեկտ) վրա:

5. Արգելվում է գովազդ տեղադրել թանգարանների, պատմական և ճարտարապետական հուշարձանների, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, ենթակայության հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների շենքերի վրա և դրանց տարածքում:

6. Գովազդի միջոց հանդիսացող հիմնական և ոչ հիմնական շինությունները պետական, համայնքային կամ այլ անձանց սեփականություն համարվող հողամասերում կարող են կառուցվել կամ տեղադրվել՝ Հայաստանի Հանրապետության հողային հարաբերությունները և քաղաքաշինական գործունեությունը կարգավորող իրավական ակտերին համապատասխան:

7. Բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերի ընդհանուր բաժնային սեփականության վրա Գովազդ, Գովազդի միջոց տեղադրելու թույլտվությունը տրվում է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և << Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին>> Հայատանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված համապատասխան համաձայնության առկայության դեպքում:

8. Պետական կամ համայնքային սեփականություն չհանդիսացող Գովազդի օբյեկտի վրա Գովազդ, Գովազդի միջոց տեղադրելու թույլտվությունը տրվում է միայն տվյալ Գովազդի օբյեկտի սեփականատիրոջ, օրինական օգտագործողի կամ տիրապետողի համաձայնության, իսկ

օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագրի առկայության դեպքում:

9. Գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համար հողամասի հատկացման որոշումներում հաշվի են առնվում Սարչապեի համայնքապետարանի աշխատակազմի կարծիքները, մասնավորապես՝
1) ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում բարեկարգման տարրերի, ինչպես նաև էլեկտրասյուների հետ առնչվելու դեպքում,
2) մայրուղիների և փողոցների երթևեկելի մասի կենտրոնական- բաժանարար գոտիներում, անկախ դրանց լայնությունից,
3)տրանսպորտային օբյեկտների հետ առնչվելու դեպքում:

2.ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

10. Սարչապետ համայնքում այդ թվում տրանսպորտային միջոցների վրա գովազդ տեղադրելու թույլտվությունը տալիս է Սարչապետ համայնքի ղեկավարը:

11. Գովազդ, Գովազդային միջոց տեղադրելու համար գավազդատուն, գովազդակիրը դիմում են ներկայացնում Սարչապետ համայնքի ղեկավարին: Դիմումը պետք է պարունակի դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում նրա լրիվ անվանումը, դիմողի հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը), գովազդային միջոցի տեղադրման վայրը և ժամկետը, տեղադրվող Գովազդի միջոցը, Գովազդի տեսակը, հայտում՝ հողամասի տրամադրման (եթե Գովազդի միջոցը տեղադրվելու է հողամասի վրա) կամ Սարչապետ համայնքին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի (եթե Գովազդը, Գովազդի միջոցը տեղադրվելու է հենասյուների կամ այլ գույքի վրա) օգտագործման համաձայնություն տալու մասին, դիմումը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը, դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը, դիմողի ստորագրությունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը և կնիքը:

12. Դիմումին կցվում են.

ա) Դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի, իսկ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում պետական գրանցման փաստաթղթերի պատճենները
բ) Գովազդի միջոցի նախագիծը, այն կոնստրուկցիա, կառույց կամ տեխնիկական այլ միջոց լինելու դեպքում համապատասխան փորձաքննության եզրակացությունը
գ) Գովազդի գունավոր ուրվանկարը (էսքիզը) երկու օրինակից՝ գովազդի չափերի նշումով
դ) Սահմանված չափի տեղական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ
ե) Եթե դիմումը ներկայացվում է դիմողի լիազորված անձի կողմից, ապա պատշաճ լիազորագիր և լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենը
զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ փաստաթղթեր, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստաթղթեր:

13. Համայնքապետարանի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուից,գովազդակրից դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում պարզում է դրանց համապատասխանությունը սույն կարգի պահանջներին: Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա Աշխատակազմը դրանք մատնացույց է անում դիմողին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները: Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա Աշխատակազմը դիմողին առաջարկում է հնգօրյա ժամկետում համալրել այն:

14. Եթե դիմումում կամ կից փաստաթղթերում առկա են ոչ ձևական, էական սխալներ, կամ Կանոնների 13-րդ կետում սահմանված ժամկետում ձևական թերությունները չեն շտկվել, ապա համայնքի ղեկավարը հնգօրյա ժամկետում մերժում է դիմումը:

15. Եթե դիմումը և կից փաստաթղթերը համապատասխանում են Կանոնների պահանջներին, կամ դիմողի կողմից վերացվել են ձևական խախտումները, ապա Աշխատակազմը մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրանք ներկայացնում է Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմ՝ ուրվանկարների և համապատասխան փորձաքննություն անցած մոնտաժային նախագծերի համաձայնեցման, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության համապատասխան փորձաքննություն անցած մոնտաժային նախագծերի համաձայնեցման, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության համապատասխան հողհատկացման, Սարչապետ համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի օգտագործման (համաձայնության) թույլտվության հարցերի քննարկման և լուծման համար:

16. Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմը հնգօրյա ժամկետում պարզում է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը Կանոնների պահանջներին: Այն դեպքում, եթե համաձայնության տրամադրման համար անհրաժեշտ է հաշվի առնել Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի կարծիքները, ապա ապահովելով այդ գործընթացը՝ տասնօրյա ժամկետում տալիս է համաձայնություն կամ մերժում դրա տրամադրումը:

17. Ըստ անհրաժեշտության՝ Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմը սահմանված կարգով նախաձեռնում է նաև Սարչապետ համայնքի ղեկավարի կողմից համապատասխան հողհատկացման գործընթացը, ինչպես նաև համաձայնություն է տալիս հենապյուների կամ այլ գույքի վրա Գովազդի միջոցի տեղադրման համար: Եթե համապատասխան հողամասի տրամադրումը կամ հենապյուների կամ այլ գույքի վրա Գովազդի միջոցի տեղադրման համար համաձայնություն տալը հնարավոր չէ կամ Գովազդը, Գովազդի միջոցը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության (այդ թվում Կանոնների) պահանջներին, կամ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, ապա Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմը մերժում է համաձայնության տրամադրումը:

18. Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի կողմից համաձայնություն տրված ուրվանկարները, փորձաքննություն անցած մոնտաժային նախագծերը, ինչպես նաև սույն կարգով նախատեսված այլ փաստաթղթերը (հողհատկացման որոշում և այլն) ստանալուց հետո երեք օրվա ընթացքում համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվություն՝ համաձայն ձևի: Եթե համաձայնության տրամադրումը մերժվել է, ապա գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվություն տալը մերժվում է նույն ժամկետում:

19. Արտաքին գովազդի տեղաբաշխման թույտվություն տրամադրելուց հետո 3-օրյա ժամկետում Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմը պետք է պարզի փաստացի տեղադրված գովազդի համապատասխանությունը ըստ չափերի և բովանդակության հաստատված էսքիզի հետ : Եթե գովազդի տեղաբաշխման թույլտվությունը տրվել է Գովազդի միջոցի տեղադրմամբ , ապա Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմը մեկամսյա ժամկետում ստուգում է Գովազդի միջոցի տեղադրման (տեղակայման) համապատասխանությունը մոնտաժային նախագծերին և տեղադիրներին: Անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնում է Սարչապետ համայնքի ղեկավարին:

20. Թույլտվությունը հանդիսանում է հատուկ հաշվառման փաստաթուղթ, որը գրանցվում է համապատասխան հաշվառման մատյանում, իսկ թույլտվության պատճենը և հաշվառման մատյանը պահվում են համայնքապետարանի աշխատակազմում:

21. Գովազդի միջոց, Գովազդ տեղադրելու դիմումը մերժելու վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:

22. Գովազդը Գովազդի միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում գովազդատուն, գովազդակիրը մինչև գովազդի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը այդ մասին գրավոր տեղեկացնում է աշխատակազմին՝ կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էսքիզը, որը գովազդի տեղաբաշխման թույլտվության համար սահմանված ժամկետներում և կարգով համաձայնեցվում է Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի հետ:

23. Գովազդի միջոցի տեղադրման մոնտաժային աշխատանքները կատարվում են մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի հետ համաձայնեցված նախագծով: Արտաքին գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուն, գավազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Գովազդի միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:

24. Այն դեպքում, երբ թույլտվության գործողության ընթացքում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի այլ դրույքաչափ, ապա գովազդատուն, գավազդակիրը կատարում են սահմանված դրույքաչափի նոր վճարում:

25. Գովազդի տեղադրման համար տրված թույլտվությունը չի կարող փոխանցվել կամ օտարվել այլ անձի:

26. Գովազդի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվության ժամկետները լրանալու, այն վաղաժամ դադարելու դեպքում գովազդատուն, գովազդակիրը պարտավոր են 5-օրյա ժամկետում իրենց միջոցներով ապամոնտաժել Գովազդը, Գովազդի միջոցը, իսկ զբաղեցված տարածքը, շենքերը, շինությունները կամ այլ գույքը, որի վրա տեղակայված, տեղադրված է եղել Գովազդի միջոցը, բերել նախկին վիճակին:

27. Սարչապետ համայնքում Գովազդի տեղաբաշխման (տեղադրման) գործընթացի նկատմամբ հսկողությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է Սարչապետ համայնքի ղեկավարը:

28. Գովազդատուն, գովազդ արտադրողը, գովազդակիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման համար պատասխանատվություն են կրում օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ) ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

29. Սարչապետ համայնքի վարչական սահմաններում Գովազդը կարող է տեղաբաշխվել վահանակային կայանքների (վահանակների), տանիքային կայանքների, մեծանկարների, էլեկտրոնային էկրանների, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարների (մարկիզներ), վիտրաժային գովազդների, շարժական գովազդների, հասարակական և այլ տրանսպորտի

կանգառասրահների, հեռախոսախցիկների, նստարանների, տաղավարների, հասարակական զուգարանների, աղբամանների, սառնարանների, օդապարիկների, ճառագայթային գովազդի, տրանսպորտային և այլ միջոցներով:

30. Սարչապետ համայնքի տարածքում Գովազդի միջոցները չեն կարող տեղաբաշխվել (տեղադրվել) երթևեկելի մասի մակերևույթից 4մ-ից ցածր բարձրությամբ, եթե գովազդի միջոցի որևէ մասը գտնվում է ճանապարհի երթևեկելի մասի վրա:

31. Ճանապարհի կողային մասում Գովազդի միջոց տեղակայելու, տեղադրելու դեպքում այն պետք է լինի եզրաքար ունեցող ճանապարհի եզրաքարից 0,6մ ոչ պակաս հեռավորությամբ, իսկ եզրաքար չլինելու դեպքում՝ ճանապարհի եզրից ոչ պակաս քան 2-3մ՝ կախված տեղանքի առանձնահատկությունից, որը պարզվում է տեղզննությամբ:

32. Գովազդի միջոցը չպետք է՝
1) խոչընդոտեն ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը, փողոցների ու մայթերի անցմանը, խանգարեն փողոցների ու մայթերի մեքենայացված մաքրմանը
2) սահմանափակեն տեսանելիությունը ավտոճանապարհների վրա
3) առաջացնեն երթևեկության մասնակիցների կուրացում (լույսով, այդ թվում նաև անդրադարձող)
4) հանդիսանան արգելք հետիոտնի շարժմանը
5) լինեն ճանապարհների վտանգավոր հատվածներում և տեղադրվեն լուսամփոփների ու ճանապարհային կանգնակների վրա:

33. Գովազդ տեղադրել չի թույլատրվում՝
1) բնակելի շենքերի մոտ, եթե դրանք հանդիսանում են աղմուկի, տատանման, հզոր ճառագայթման և էլեկտրամագնիսական դաշտի, ուժեղ լույսի, այդ թվում տատանվող աղբյուր
2) թանգարաններում, պատմական և ճարտարապետական հուշարձանների վրա, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի վրա և դրանց տարածքում
3) <<Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վրա և դրանց տարածքներում (պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցների, դրանց համակառույցների և համալիրների, իրենց գրված կամպատմականորեն իրենց հետ կապված տարածքների վրա, ինչպես նաև պատմամշակութային արգելոցներում)
4) Ճանապարհային ցանցում երբ այն անհամապատասխան է ճանապարհատրանսպորտային տվյալ իրավիճակի հետ և նմանություն ունի (արտաքին տեսքով, պատկերով և ձայնային էֆեկտով) ճանապարհային նշանների, ճանապարհային երթևեկության կազմակերպման և այլ տեխնիկական միջոցների հետ:

34. Վահանակային կայանքները (վահանակները) տեղեկատվության համար մակերես նախատեսող կոնստրուկցիաներ են՝ բաղկացած հիմքից, հիմնակմախքից (կարկաս) և տեղակատու դաշտից: Տեղեկատու դաշտը կարող է լինել մեծ (առավելագույնը՝ 4մ x 12մ), միջին (առավելագույնը՝ 3մ x 6մ) կամ փոքր (առավելագույնը՝ 1,2մ x 1,8մ) չափերի:
Վահանակները կարող են լինել երկկողմանի կամ միակողմանի (գովազդի հակառակ կողմը պարտադիր դեկորատիվ ձևավորվում է) կատարմամբ:

35. Սարչապետ համայնքի կենտրոնի սահմաններում տեղադրվող վահանակների չափը չպետք է գերազանցի 3մ x 6մ չափերը:

36. Մայրուղիներում և խճուղիներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև հեռավորությունը, կախված դրանց չափերից, չի կարող պակաս լինել՝
1) 15քմ և ավելի՝ 150 մ
2) 10-15քմ՝ 100 մ
3) 6-10քմ՝ 90 մ
4) 4-6քմ՝ 50 մ
5) 2-4քմ՝ 25 մ
6) մինչև 2քմ՝ 15 մ

37. Պողոտաներում և փողոցներում, որոնցում տրանսպորտային միջոցների թույլատրելի արագությունը 60կմ/ժ է, մեկ ուղղությամբ երկու վահանակների միջև հեռավորությունը, կախված դրանց չափերից, չի կարող պակաս լինել՝
1)15քմ և ավելի՝ 120 մ
2) 6-15քմ՝ 90 մ
3) 2-6քմ՝ 30 մ
4) մինչև 2քմ՝ 15 մ

38. Փողոցներում, որոնցում տրանսպորտային միջոցների թույլատրելի արագությունը 60կմ/ժ-ից պակաս է, ինչպես նաև նեղ փողոցներում և նրբանցքներում, մեկ ուղղությամբ երկու վահանակների միջև հեռավորությունը, կախված դրանց չափերից, չի կարող պակաս լինել՝
1) 10-12քմ՝ 60 մ
2) 6-10քմ՝ 50 մ
3) 4-6քմ՝ 50 մ
4) մինչև 4քմ՝ 20 մ

39. Շենքի տանիքին տեղադրվող տանիքային կայանքները պետք է ունենան հակահրդեհային և հոսանքի վթարային անջատման համակարգ: Ամրակցման տարրերը, ինչպես և կոնստրուկցիայի կրող մասի հակառակ կողմը պետք է ծածկվեն դեկորատիվ պանելով:

40. Պատի մեծանկարների տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է կոնստրուկցիայի, իսկ դրա բացակայության դեպքում՝ անմիջական չափերով:

41. Հենասյուների կամ շենքերի վրա ամրացվող երկկողմանի հարթակային վահանակների բարձակների առավելագույն չափը չի կարող ավելի լինել 1,25մ x 2,մ: Շահագործման անվտանգության նպատակով բարձակները տեղադրվում են հողի մակերևույթից ոչ պակաս, քան 4,5մ բարձրության վրա: Մեկ հիմքի վրա չի կարող տեղադրվել մեկից ավելի բարձակ: Բարձակի տեղեկատու դաշտի մակերեսը հաշվարկվում է կողմերի ընդհանուր մակերեսով:

42. Էլեկտրոնային էկրաններ կարող են տեղադրվել շենքերի տանիքներին, շենքերի պատերի խուլ հատվածներին, վերգետնյա անցումների վրա, ճանապարհների կենտրոնական բաժանարար գոտիներում և խաչմերուկներում:

Էկրանային /վերարտադրող/ սարքավորումների մակերեսը որոշվում է էկրանի վերարտադրվող պատկերի մակերեսով: Էլեկտրոնային էկրանների տեղադրման համար սահմանվում են հետևյալ չափորոշիչները.

ա) էլեկտրոնային էկրանի որևէ հատված չի կարող գտնվել ճանապարհի երթևեկելի մասի վրա՝

բացառությամբ վերգետնյա անցումների վրա տեղադրված էլեկտրոնային էկրանների:
բ) Յուրաքանչյուր խաչմերուկում չի կարող տեղադրվել 1-ից ավելի էլեկտրոնային վահանակ:
գ) Ցանկացած չափի էլեկտրոնային էկրանների միջև հեռավորությունը չի կարող պակաս լինել 150 մետրից:
դ) Էլեկտրոնային էկրանի յուրաքանչյուր տեղադիրի համար Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի կողմից սահմանվում են առանձին չափորոշիչներ՝ կապված բարձրության և տեղեկատու դաշտի մակերեսի հետ, որոնք հաշվի են առնում տվյալ տարածքի ճարտարապետական առանձնահատկությունները:

43. Դրոշակների, հովհարների, (մարկիզ) գովազդային տեղեկատու մակերեսները որոշվում են բոլոր կողմերի մակերեսով:

44. Վիտրաժային արտաքին գովազդի միջոցների (դռների և լուսամուտափեղկերի վրա, լուսամուտափեղկից ներս տեղադրված, սակայն դրսից տեսանելի գովազդ) մակերեսները հաշվարկվում են փաստացի տեղադրված գովազդի չափով:

45. Ստենդները՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից աշխատանքային ժամերի ընթացքում տեղադրվող արտաքին գովազդի շարժական և ժամանակավոր միջոցները, պետք է ունենան երկկողմանի կամ միակողմանի լուծում: Ստենդները կարող են տեղադրվել մայթերին, որոնց նվազագույն լայնքը կազմում է 3,5մ և չեն կարող մայթի վրա զբաղեցնել 1քմ մակերեսից ավելի տարածք:

46. Շենք-շինությունների ճակատային հատվածների վրա թույլատրելի գովազդի տեղադիրը, չափը, գունային լուծումը և գովազդի պատրաստման համար օգտագործվող նյութերը որոշվում են՝ համաձայն Սարչապետ համայնքի ղեկավարի կողմից հաստատված սխեմայի:

4. ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Սույն կանոնների խախտումը առաջացնում է պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N-15-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի առաջարկը և Սարչապետ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքին <<Սոցիալական ներդրումների և Տարածքային զարգացման ծրագրին>> մասնակցելու համար:
2. Ստեղծել նախաձեռնող խումբ հետևյալ կազմով՝
1. Մարտիրոսյան Անժելա-աշխատակազմի ղեկավար- խմբի նախագահ
2. Աբրահամյան Ջիվան-տնտեսական զարգացման պատասխանատու-խմբի նախագահի տեղակալ
3.Դավթյան Գևորգ- ավագանու անդամ-խմբի անդամ
4.Բաղդասարյան Արմեն - ավագանու անդամ-խմբի անդամ
5.Խաչատուրյան Հովհաննես – վարչական ղեկավար-խմբի անդամ
6.Գրիգորյան Էմիլ – վարչական ղեկավար-խմբի անդամ
7.Փնջոյան Արարատ – վարչական ղեկավար-խմբի անդամ
8. Էգնատոսյան Խաչիկ- վարչական ղեկավար-խմբի անդամ
9. Դավթյան Արփինե- համայնքի բնակչուհի-խմբի անդամ
3.Հանձնարարել նախաձեռնող խմբին՝
3.1. Նախապատրաստել ծրագրի նախնական առաջարկ,
3.2. Հայտերում խնդիրների ընտրությունը կատարել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից առաջարկված չափանիշներին համաձայն,
3.3. Ծրագրի ընտրության և նախապատրաստման ընթացքում մասնակից համայնքների բնակչությանը տրամադրել մանրամասն տեղեկատվություն ծրագրի և նրա նախապատրաստման ընթացքի մասին,
4. Լիազորել նախաձեռնող խմբի անդամներին ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ՄՆՏԶ ծրագրի առաջարկները Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին ներկայացնելու համար:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
5. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
7. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ
8. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ
9. ՓՆՋՈՅԱՆ ՎԵՐՋԱԼՈՒՅՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N-16-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի կամավոր խնդիրն[illegible] դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մաս[illegible] 03-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհվա[illegible] ծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պա[illegible] մարզի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտան[illegible], սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմո[illegible] քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

[illegible]ՊԵՏ ***ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Բավարարել հ[illegible] բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգ[illegible] համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկ[illegible] սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնա[illegible]:
3. Սույն որոշումն [illegible] մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱ[illegible]
2. ԱՎԵՏՅԱՆ [illegible]
3. ԳԻՆՈՅԱՆ [illegible]
4. ԳՐԻԳՈՐՅ[illegible]
5. ԴԱՎԹՅԱՆ [illegible]
6. ՄԱՐՏԻՐՈՍ[illegible]
7. ՄԽՈՅԱՆ [illegible]
8. ՏՈՄԵՅԱՆ [illegible]
9. ՓՆՋՈՅԱՆ [illegible]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու
2018 թվականի փետրվարի 27-ի N- 16 -Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Բարսեղյան Արշակ Գևորգի- 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ /սոց. օգնություն/
2. Ստեփանյան Վահան Ռուբիկի- 80 000 /ութսուն հազար/ դրամ /սոց. օգնություն/
3. Մարդոյան Հայկուշ- 50 000 /հիսուն հազար/ դրամ /սոց. օգնություն/

ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

(ստորագրություն)

ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
(անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N-17-Ն

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով '

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Սարչապետ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի :

2. Հաստատել 2017 թվականի Սարչապետ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
5. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
7. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ
8. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ
9. ՓՆՋՈՅԱՆ ՎԵՐՋԱԼՈՒՅՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Հավելված 2

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2017 թվականին նախատեսված ծրագրերն են.

- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում և խճապատում
- Աջակցել բնակչության շրջանում հակահամաճարակային և կարանտին միջոցառումների կազմակերպումը
- Աջակցել անասնաբուժական ծառայությանը՝ կենդանիների հիվանդությունների կանխման նպատակով միջոցառումների իրագործմանը
- Հնարավորության չափով աջակցություն ցուցաբերել հաշմանդամների, կերակրողներին կորցրած ընտանիքների, պատերազմի վետերանների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ
- Խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի կառուցում
- Գիշերային լուսավորության լուսատուների տեղադրում
- Մշակույթի տան մասնակի վերանորոգում

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված 2017 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Բարեկարգվել են Պրիվոլնոյե, Արծնի,Ապավեն, Նորաշեն, Զորամուտ,Սարչապետ համայնքներն իրար և հարևան համայնքների հետ կապող, ինչպես նաև ներհամայնքային ճանապարհները, կանաչապատվել է համայնքի հրապարակը, կազմակերպվել է և աջակցություն է ցուցաբերվել անասնաբուժական ծառայությունների մատուցմանը, տրամադրվել է սոցիալական օգնություն համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, նորածին երեխաների ծնողներին տրամադրվել է միանվագ դրամական պարգևատրում, համայնքի մանկապարտեզին տրամադրվել է դրամաշնորհ, անապահով ուսանողների համար փոխանցվել է ուսման վարձ, կազմակերպվել է հիշատակի և տոների օրերին նվիրված միջոցառումներ, Սարչապետ, Նորաշեն, Զորամուտ համայնքներում իրագործվել է աղբահանության աշխատանքներ, դեպի համայնք տանող ճանապարհներին իրականացվել է համապետական շաբաթօրյակի միջոցառումներ, ինչպես նաև փակվել են անթույլատրելի վայրերում առաջացած մի շարք աղբավայրեր, փողոցների գիշերային լուսավորության աշխատանքներ են կատարվել Նորաշեն, Սարչապետ, Պրիվոլնոյե, Զորամուտ համայնքներում, իրագործվել է մշակույթի տան մուտքի դռների տեղադրում:

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N-18-Ա

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ, <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝
ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Սարչապետ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը հետևյալ կազմով.
1) Բորիս Բարոյան-Սարչապետ համայնքի ղեկավար-հանձնաժողովի նախագահ
2) Անժելա Մարտիրոսյան-աշխատակազմի քարտուղար-հանձնաժողովի նախագահի տեղակալ
3) Իզաբելա Տոմեյան-ուսուցչուհի-հանձնաժողովի քարտուղար
4) Նարինե Բարսեղյան- բուժքույր-հանձնաժողովի անդամ
5) Արփինե Դավթյան-սոց.աշխատող-հանձնաժողովի անդամ
6) Արկադի Մարկոսյան-ոստիկանության ԱԳԽ-հանձնաժողովի անդամ
2. Ուժը կորցրած ճանաչել՝
1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 6-ի <Սարչապետ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին> թիվ 32-Ա որոշումը,
2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ապավեն համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի <Ապավեն համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով կազմելու մասին> թիվ 19-Ա որոշումը,
3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պետրովկա համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 09-ի <<Պետրովկա համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով կազմելու մասին>> թիվ 07-Ա որոշումը,
4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորամուտ համայնքի ավագանու 2016 թվականի օգոստոսի 12-ի <<Ձորամուտ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> թիվ 17-Ա որոշումը,
5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նորաշեն համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 22-ի << ՀՀ Լոռու մարզի Նորաշեն համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով կազմելու մասին>> թիվ 19-Ա որոշումը,
6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պրիվոլնոյե համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 16-ի <<Պրիվոլնոյե համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> թիվ 12-Ա որոշումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
5. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
7. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ
8. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ
9. ՓՆՋՈՅԱՆ ՎԵՐՋԱԼՈՒՅՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ